

**ՏՆԱՅԻՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (IN-HOME SUPPORTIVE SERVICES) ԾՐԱԳԻՐ**

**ԾԱՆՈՒՑՈՒՄ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՂԻՆ՝ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՇԱԲԱԹՎԱ ԵՎ/ԿԱՍ ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ ՄԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ ԳԵՐԱԶԱՆՑԵԼՈՒ ԵՐՐՈՐԴ ԽԱԽՏՈՒՄԸ (ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄ 90 ՕՐՈՎ) ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(ADDRESSEE)

ՎԱՐՉԱՇՐՋԱՆ՝ \_\_\_\_\_

Ծանուցման ամսաթիվը՝ \_\_\_\_\_

Ստացողի անունը՝ \_\_\_\_\_

Ստացողի գործի համարը՝ \_\_\_\_\_

IHSS գրասենյակի հասցեն՝ \_\_\_\_\_

IHSS գրասենյակի հեռախոսահամարը՝ \_\_\_\_\_

Ում՝ Տնային աջակցության ծառայությունների (IHSS) մատակարարողին

Այս ծանուցմամբ տեղեկացնում ենք Ձեզ, որ մենք ուսումնասիրել ենք Խախտումը վիճարկելու իրավունքի ձևաթուղթը, որը Դուք ներկայացրել էիք \_\_\_\_\_ ամսին երրորդ խախտում ստանալուց հետո: Այս ծանուցման ամսաթվի դրությամբ խախտումը հաստատված է: Այս որոշման հիմքում ընկած է վիճարկման ձևում Ձեր կողմից տրամադրված տեղեկությունների և/կամ փաստաթղթերի ուսումնասիրությունը: Մենք պարզեցինք, որ բավարար տեղեկություններ և/կամ փաստաթղթեր չկան ցույց տալու համար, որ Դուք համապատասխանում եք չափանիշներին, որոնք պահանջում են Ձեզանից աշխատել ավելի շատ ժամեր, քան թույլ է տալիս Ձեր աշխատանքային շաբաթվա պայմանագիրը: **Դուք կշարունակեք երրորդ խախտում ունենալ հետևյալ պատճառ(ներ)ով՝**

- Աշխատել եք 40 ժամից ավել աշխատանքային շաբաթում ստացողի համար՝ առանց վարչաշրջանի հավանության, երբ այդ ստացողի առավելագույն շաբաթական ժամերը կազմում են 40 ժամ կամ ավելի քիչ:
- Աշխատել եք ստացողի առավելագույն շաբաթական ժամերից ավել՝ առանց վարչաշրջանի հավանության, և դրա հետևանքով դուք ավելի շատ արտաժամյա աշխատանք եք կատարել անսվա ընթացքում, քան սովորաբար կանեիք:
- Դուք աշխատում եք մի քանի ստացողների համար, ու աշխատում եք ավելի քան 66 ժամ մեկ աշխատանքային շաբաթում:
- Հայցել եք 7 ժամը գերազանցող ճամփորդության ժամանակ մեկ աշխատանքային շաբաթում:

Եթե Դուք համաձայն չեք որոշման հետ և ցանկանում եք Նահանգային վարչական վերանայում խնդրել, Դուք այս ծանուցման ամսաթվից 10 օրացուցային օրվա ընթացքում կարող եք ներկայացնել կցված Նահանգային վարչական վերանայման խնդրանքի ձևաթուղթը: Եթե Դուք Նահանգային վարչական վերանայման խնդրանք ներկայացնեք, Դուք կկարողանաք շարունակել ծառայություններ տրամադրել, մինչև որոշում կկայացվի Ձեր խնդրանքի վերաբերյալ:

Եթե Դուք այս ծանուցման ամսաթվից 10 օրացուցային օրվա ընթացքում չներկայացնեք Նահանգային վարչական վերանայման խնդրանք, ապա այս ծանուցման ամսաթվից 20 օրացուցային օր անց Ձեզ թույլ չեն տա մատուցել IHSS ծառայություններ 90 օրվա ընթացքում:

Եթե Դուք վստահ չեք, թե որ օրը կարող եք վերսկսել ծառայությունների մատուցումը, կամ եթե այս ծանուցման վերաբերյալ որևէ հարց ունեք, խնդրում ենք կապվել Ձեր IHSS գրասենյակի հետ վերոնշյալ հեռախոսահամարով: